Ուրախալի է, որ վերջին տարիներին մեր մարզի արտադրանքն ունի բարձր պահանջարկ նաև հանրապետությունից դուրս: Արտադրված պտուղը, հատկապես՝ ծիրանն ու կեռասը, «Սպայկա» ՍՊԸ-ի և անհատ ձեռներեցների միջոցով արտահանվել են Ռուսաստանի Դաշնություն:

Հայտնի է, որ Արարատի մարզում բուսաբուծության առավել զարգացած ճյուղ է համարվում խաղողագործությունը: Այս տարի արտադրված խաղողի քանակը ևս ավելացել է նախորդ տարվա համեմատ: Խաղողը մթերվեց հիմնականում կիլոգրամը 130 դրամով: Վճարումների 90%-ից ավելին իրականացվեց անմիջապես, իսկ գումարի մնացած մասը կվճարվի պայմանագրերով սահմանված ժամկետներում:

Ավելացնեն, որ այս տարի մեր գյուղացիական տնտեսությունների համար մեծ աջակցություն եղավ «Հայաստանի Հանրապետության 2010-2014թթ. ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման» ծրագրի շրջանակներում մարզին հատկացված 197



տոննա աշնանացան ցորենի առաջին վերատաղրության սերմացուն, ինչի շնորհիվ մարզը ցորենի սերմացուի պակասուրդ չունի:

Մեր մարզում, ինչպես նաև ողջ հանրապետությունում, կան մի շարք հիմնախնդիրներ, որոնք են. գյուղատնտեսության ապահովագրության բացակայությունը, գյուղատնտեսական մեխանիզացիայի, բարձր բերքատու սերմացուների և տնկիների, կոմպլեքս պարարտանյութերի և որակյալ թունաքիմիկատների պակասը, հակահեղեղային միջոցառումների ոչ լիարժեք իրականացումը, արոտավայրերի ջրաբեխացումը և բարձրադիր արոտավայրեր տանող ճանապարհների անբարեկարգ վիճակը: Աշխատում ենք բոլոր համայնքներում վերանորոգել երրորդ կարգի ջրանցքները, ավելացնել հակակարկտային կայանների քանակը, ոռոգման մեխանիկական եղանակից անցնել ինքնահոս եղանակի (նկատի ունեն Վեդու ջրամբարի, Նարեկի հեղեղակարգավորիչի և Քաղցրաշենի ջրատարի կառուցումը), ինչը կբերի մշակովի հողատարածքների ավելացմանը:

Արմեն Դուլարյան, ՀՀ Տավուշի մարզպետ

Տավուշն ավանդական գյուղատնտեսական մարզ է, և հենց այդ պատճառով մարզի զարգացման ծրագրում գյուղատնտեսությունը համարվել է գերակա ճյուղ: Տավուշում հիմնական շեշտադրումները դրված են անասնապահության զարգացման, խաղողի և պտղի, ծխախոտի տարածքների ընդլայնման, վերամշակող ձեռնարկությունների վերազինման, որոշ չափով՝ նաև բանջարանաբուստանային և հացահատիկային կուլտուրաների վրա: 2011 թ. արձանագրվել է գյուղատնտեսական մթերքների արտադրության նկատելի աճ շնորհիվ ավելի բարձր բերքատվության: Այսպես՝ 2010 թ. 14.500 տոննա կարտոֆիլի դիմաց այս տարի արտադրվել է 20.000 տոննա կարտոֆիլ, պտղի և հատապտղի արտադրությունը նախորդ տարվա 6.000 տոննայի համեմատ կազմել է

10.100 տոննա, խաղողինը՝ 11.600 տոննայի դիմաց՝ 13.200 տոննա, իսկ ծխախոտը եղել է 700 տոննայով ավել: Այժմ ընթացքի մեջ են աշնանացանի աշխատանքները՝ արդեն իսկ գերազանցելով 2010 թ. 5.255 հեկտարը:

Հիմնախնդիրները շատ են: Դեռևս 2000 թ., կազմելով մարզի զարգացման ռազմավարությունը, մենք գյուղատնտեսությունը ամրագրել ենք որպես զարգացման գերակա ճյուղ: Նոյեմբերյանում վերականգնվեցին դեղձի այգիները, որոնք արդեն բերք են տալիս: Պտղի և խաղողի այգիների հիմնման ծրագրեր ենք իրականացնում Իջևանի և Բերդի տարածաշրջանների որոշ հատվածների համար: Ստածում ենք նաև անասնապահության զարգացման ուղղությամբ:

Անասնապահության զարգացման համար նախևառաջ նպաստավոր պայմաններ պետք է ստեղծենք: Այդ նպատակով իրականացնում ենք «Արոտների կառավարման և անասնապահության զարգացման» ծրագիրը, որը նպատակ ունի բարելավել սարամասերի պայմանները՝ ստեղծելով համապատասխան ենթակառուցվածքներ (ճանապարհների կառուցում, ջրաբեխացում, էլեկտրաֆիկացում և այլն): Պետք է հիմնենք նաև կաթի վերամշակման կետեր և սառնարանային տնտեսություններ:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը մարզի 6 համայնքներում իրականացնում է գյուղատնտեսության զարգացման ուղղված ծրագրեր: Բարելավվում ու ստեղծվում են ոռոգման համակարգեր ու տնկարանային տնտեսություններ, կառուցվում են անասնագույն և դրսից երինջներ են ներկրվում (դրանք տրվում են գյուղացիական տնտեսություններին): Սկսած 2009թ. «Թամարա ֆրութ» ՓԲԸ-ի կողմից Տավուշի մարզում ընթանում է օրգանիկ այգիների հիմնելու գործընթացը: 2012թ. դրանք կգերազանցեն 30 հեկտարը: Մի խոսքով՝ մենք փորձում ենք գյուղացու համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, որպեսզի նա ունենա իր հողը մշակելու և անասնապահությամբ զբաղվելու ցանկություն:

Կցանկանայի մշել նաև ոռոգման ոլորտում կատարվող աշխատանքները: Վերջին տարիների ընթացքում մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել այդ ուղղությամբ: Վերջերս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի շրջանակներում մեծ հանդիսավորությամբ շահագործման հանձնվեցին «Նոյեմբերյան 1» պոմպակայանն ու պատվարը, որից կօգտվեն 2400 ջրօգտագործողներ:

Գյուղատնտեսությունն ունի գյուղտեխնիկայի թարմացման ու նորացման խնդիր, որի ուղղությամբ կազմվել է «Գյուղատնտեսության տեխնիկական օգտագործման արդյունավետության բարձրացման միջոցառումների ծրագիր»:

Իհարկե, զարգացման ցանկալի մակարդակին հասնելու համար դեռևս բազմաթիվ հիմնախնդիրներ պետք է լուծենք: Սակայն այս խնդիրների բնույթը տարեցտարի փոխվում է: Եթե տարիներ առաջ մտածում էինք այգիներ հիմնելու մասին, ապա այսօր բերքի ընդունման ու վերամշակման խնդիրն է օրակարգում: Սակայն այդ առումով մեր մարզը լավ վիճակում է, քանի որ գործում են գինու և պահածոների գործարաններ:

Ալեքսան Բոթանյան, Արագածոտնի մարզ, Իրինդ գյուղի գյուղապետ

Մեր գյուղում գյուղացին շատ խնդիրներ ունի. ոռոգման ջուր չունենք, պարարտանյութերը շատ քանկ են, սերմացու չենք կարողացել ձեռք բերել վերջինիս անորակ և քանկ լինելու պատճառով: 1000 մարդ բնակչություն ունեցող գյուղն ընդամենը 3 հեկտար աշնանացան ցորեն է ցանել, ինչից արդեն կարելի է պատկերացնել գյուղացու վիճակը:

Մարդիկ հողերը վարեցին, հետո ցորենը գնեցին, սակայն այն ոչ մի բանի պիտանի չէր, քանի որ որդմած էր, պատված էր մոլխատերով և պարունակում էր ինչ-որ անհասկանալի խառնուրդներ: Իսկ պատասխանատուները նշում էին, որ ցորենի սերմը բարձրակարգ է՝ առաջին վերարտադրության, բայց երևի այդ ցորենը 20-րդ վերարտադրության էլ չէր: Հասկացել էին, որ անպիտան ցորեն է և վաճառել գյուղացուն:

Գյուղատնտեսությանը բավարար ուշադրություն չեն դարձնում: Ազդտական պարարտանյութի 1 պարկի (50 կգ) գինը ամռանն արդեն 11-12.000 դրամ էր՝ մեկ անվաճ ընթացքում թանկանալով 3.000 դրամով: Եթե հողը չպարարտացնես, այդ հողից ի՞նչ բերք սպասես: Պետք է գյուղացուն ոգևորել, առանց տոկոսի վարկեր տրամադրել, որ վերջինս հետագայում չզրկվի իր տնից ու ունեցվածքից: Գյուղի ընտանիքների համարյա բոլոր տղամարդիկ մեկնում են արտագնա աշխատանքի, քանի որ իրենց հողի վրա որքան էլ քրտնաջան աշխատեն՝ ընտանիք չեն պահի: Իսկ երբ իրենց աճեցրած բերքը ցանկանում են վաճառել Երևանի շուկաներում, վերավաճառողները թույլ չեն տալիս՝ կարծես դա իրենց մենաշնորհը լինի:



Անցյալ տարի գյուղի կենդանիների մոտ տարածվեց բրուցելյոզ հիվանդությունը: Բազմաթիվ կենդանիներ, որոնք գյուղի ընտանիքների ապրուստի միակ միջոցն էին, սատկեցին: Սակայն ոչ մի փոխհատուցում չտրվեց, ասացին՝ կփոխհատուցեն, եթե բյուջեում գումար լինի, բայց այդպես էլ գումար չգտան:

Գուրգեն Բալյան, Գեղարքունիքի մարզ, Վահանի գյուղի գյուղապետ

Երևանից 128 կիլոմետր հեռավորության վրա գտնվող մեր գյուղում 1.230 մարդ է բնակվում: Վահանը Հայաստանի հյուսիս-արևելյան դարպասն է: Գյուղը ծովի մակերևույթից 1.900 մետր բարձրության վրա է. տարվա 6 ամիսը մեզ մոտ ձմեռ է: Մեր գյուղում հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և կարտոֆիլի մշակմամբ: Կարող ենք նաև սոխ, սխտորր, կաղամբ ցանել, սակայն երբ հասնում է իրացման պահը, գյուղացին նույնիսկ չի կարողանում ետ բերել այդ բերքը ստանալու համար ծախսած գումարները: Պարարտանյութը՝ թանկ, սերմացուն՝ թանկ, վառելիքը՝ թանկ: Եթե տարին բարեհաջող չլինի՝ կարկուտ կամ ցրտահարություն լինի, մենք վնաս ենք կրելու: Վերջին 15-20 տարիների ընթացքում եղանակի անոմալիաները շատ հաճախակի են դարձել: Այս տարի, օրինակ, գյուղը 9 տոննա ցորեն է ստացել, այնինչ նորմալ տարիներին 30 տոննա է լինում: Գարու մասին ընդհանրապես չեն ցանկանում խոսել: Մենք գարնանը մարզպետարանից կիլոգրամը 70 դրամով սերմ գնեցինք՝ աշնանը մարելու պայմանով: Բայց հետո պարզվեց, որ ոչ թե գարնանացան, այլ աշնանացան ցարի էր: Այն չէր հասնում, կանաչ մնաց և գյուղացին 2 տոննայի փոխարեն 400-500 կիլոգրամ բերք ստացավ, այն էլ անորակ:

Սա նշանակում է, որ գյուղացու պարտքերին ավելացավ ևս մեկը, իսկ թե ինչպես այն պետք է մարվի՝ դեռ պարզ չէ: Ես կառավարությանն առաջարկում եմ համայնքներն ապահովել գյուղտեխնիկայով, քանի որ գյուղտեխնիկան՝ կոմբայններն ու տրակտորները սեփականաշնորհված են, ով ինչ գնով ցանկանում է՝ այդ գնով էլ մատուցում է իր ծառայությունները: Մեկ այլ խնդիր էլ կա. գյուղից կաթը մթերում է «Աշտարակ կաթ» ընկերությունը, սակայն վճարումները ուշացնում է:

Արմեն Մովսիսյան, Սյունիքի մարզ, Դարբաս գյուղի բնակիչ

Այս տարի գնորդների հետ պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ անսահմանափակ քանակությամբ կաղամբ կգնեն: Սակայն ծյունը տեղաց մինչև բերքահավաքը և մոտ 500-600 տոննա կաղամբ մնաց ծյան տակ: Խնդիրը նաև այն է, որ սկզբում մեզ ապրանքի դիմաց այլ գին են առաջարկում, իսկ հետո փաստի առաջ կանգնեցնելով՝ խոստացվածից 3 անգամ քիչ են վճարում: Մենք ստիպված համաձայնում ենք, այլապես ընդհանրապես չենք կարող իրացնել: Բայց չէ՞ որ մենք մեր տների, ունեցվածքի դիմաց վարկ էինք վերցրել, հող վարձակալել: Կարող եմ ասել, որ պայմանագիր կնքող ընկերությունը ավելի շատ գումար է աշխատում, քան մենք, թեև ամբողջ տարին չարշարվում ենք, կռիվ տալիս հողի հետ, իսկ հետո բերքի ձեռքը կրակն ընկնում: Հենց դա էլ ստիպում է բազմաթիվ գյուղացիների թողնել իրենց տները և մեկնել արտագնա աշխատանքի: Շատերն էլ մեկնում են, որ կարողանան իրենց օգտագործած ոռոգման ջրի, սերմացուի, վարձակալությամբ վերցրած հողերի դիմաց վճարել:

Հովհաննես Սարգսյան, Արմավիրի մարզ, Գայ գյուղի բնակիչ

Ես հիմնականում զբաղվում եմ բանջարաբուստնային կուլտուրաների մշակմամբ, սակայն այդ անում եմ գոյություն պաշտպանելու համար միայն: Սերմացուն և պարարտանյութերը տարեցտարի թանկանում են, իսկ լուրիկի ու վարունգի գինը մնում է նույնը: Այս տարի թանկացավ նաև ջերմոցները ծածկելու համար նախատեսված պոլիէթիլենը: Տրամաբանորեն մենք պետք է ապրանքը թանկացնենք, բայց Թուրքիայից էժանն է գալիս և մենք ստիպված մեր ապրանքն էժանացնում ենք: Հիմա մի նոր խնդիր էլ է առաջացել. չենք կարողանում աշխատուժ վարձել, հատկապես բերքի եռուն շրջանում: Երիտասարդները չեն ցանկանում արևի տակ երկար աշխատել: Նախկինում 3.000 դրամ օրավարձով էինք բանվոր վերցնում, հիմա 5.000-ով էլ չենք կարողանում գտնել: Լինում է, որ բանջարեղենը օրերով մնում է դաշտում և դառնում վաճառքի համար ոչ պիտանի:

Վահան Գրիգորյան, Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի բնակիչ

Գյուղացին պետք է և՛ անասուն պահի, և՛ այգի ունենա, և՛ բուստան մշակի: Միայն այդ դեպքում նա ապահովագրված կլինի վնասներից: Փորձը ցույց է տալիս, որ եթե տարին անբարենպաստ է պտուղների, ապա հաջող է անասնապահության համար: Ու հակառակը՝ երբ ծիրանն ու կեռասը շատ լավ բերք են տալիս, անասուններին մի հիվանդություն կանում է: Բնությունը մի ձեռքով վերցնում է, մյուսով՝ տալիս: Այս տարի, օրինակ, մեր գյուղում գրեթե ծիրան չկար, որովհետև գարնանային անձրևները խանգարեցին փոշոտմանը, սակայն այդ նույն անձրևների արդյունքում խոտը շատ առատ էր, և հետևաբար՝ անասունը լավ կեր ունեցավ առանց սար բարձրանալու: Տարին առանձնահատուկ էր նաև նրանով, որ կեռասի, բալի ու խնձորի մթերումները շատ հաջող եղան, և ոչ մի կիլոգրամ միրգ չմնաց գետնին: Եթե մթերումները ապագայում այս ձևով շարունակվեն, ապա գյուղի վիճակը կլավանա:



Great Food, great times

Come to our Cucina, The Italian kitchen and enjoy the best home style cooked Italian dishes, pastas and pizzas with a glass of wine. Our new menu offers you a wide choice of premium Italian appetizers, and now Cucina, The Italian kitchen is also open for business lunch.

Our private dining room creates the right ambience for family gatherings as well as private dining options to celebrate a successful meeting.

Great food, great wines and renown Marriott hospitality with breathtaking view on Republic Square awaits you in Cucina The Italian kitchen.



For more information visit
www.marriottarmenia.com or call 599-000.

Armenia Marriott Hotel Yerevan,
Amiryan street 1 Yerevan Armenia 0010

Marriott.
ARMENIA YEREVAN



More From Less: Armenian Biodiversity for Food and Nutrition

By Gagik Sardaryan, Director, Center for Agribusiness & Rural Development (CARD)

“In today’s world, the most important business is growing enough food and ensuring that it reaches everyone. To feed our growing population, we need to increase global food production by 70% before 2050. Women make up the majority of the agricultural workforce in many areas of the world. Yet today, for every investment we make in producing food, we fail to get the best results because MANY women lack the access they need to land, seeds, water, credit and markets...”

- Office of Global Food Security
U.S. Department of State

The history of modern agriculture begins after the Second World War. Industrialized countries switched back to a peacetime economy, and developing countries gained independence from their colonial rulers and took more control over their agricultural practices.

Against the backdrop of an expanding population, when international political and trade relations were being redrawn, many countries sought to increase self-sufficiency of food production to avoid the supply problems experienced by some of the richest countries in the world during the war.



Not only have the U.S. and EU overcome food shortage and ensured food security due to the right agricultural policies, strong government support and rich farming practices, but they are also the leading food exporters in the world. The food security goal in Western countries really means that everybody, irrespective of income level, has sufficient access to food for a healthy diet and is not frustrated about where the next meal is coming from.

The same process was expected to take place in Armenia after the food shortage the country faced during the war in

early 1990s. Nevertheless, after almost 20 years of peace and implementation of various agricultural programs, Armenia has only reached 40-50 percent self-sufficiency in terms of many strategic crops. It continues extensive agricultural production practices and relies mainly on food imports.

Having about 2 tons of wheat production per hectare and almost 2000 liters of milk per cow annually, Armenia is almost on the same level as it was 30 years ago and has the same indicators as many countries had before the Second World War. If the situation continues like this, Armenia will not be able to overcome the food shortage in the near future. Today industrialized countries are producing 5 to 8 times more wheat and milk per hectare and per cow as compared to Armenia.

▶▶ If you think in terms of a year, plant a seed, if in terms of ten years, plant trees; if in terms of 100 years, teach the people.
-Confucius ◀◀

For example, Israel was able to increase the milk production per cow up to 10,000 liters within 30 years. According to the data of World Dairy Report 2010, published by International Farm Comparison Network (IFCN), there are about 120,000 cows in Israel producing 1.2 million tons of milk a year. Armenia has almost 3 times more milking cows than Israel, but we produce twice less milk. According to the same source, the average farm (cows/farm) in Armenia has 1.6 cows. Average dairy farm in Israel has about 125 cows and all the 120,000 cows of the country have access to machine milking.

Dairy farming has always been a hard work. In peasant Armenia, milking the cows, goats or sheep is traditionally done by women. More than 100,000 women are involved in milking cows, goats or sheep, and less than 1 percent uses milking machines. Farmers with small herds usually choose hand milking method because of the lack of minimal capital investment and as a result of underestimating hygiene rules and product safety. Introduction of machine milking instead of hand milking can improve the sanitary quality of milk and raise the work efficiency on small family farms, as well as increase the average milk yield per milking and shorten milking time.

Agriculture development in Israel is quite unique. Having less agricultural lands and irrigation water as compared to Armenia, Israel is almost fully self-sufficient, producing about 90 percent of the main food crops and feeding more than 8 million people.

Unlike most countries, where agricultural practices have been almost fully separated from the ideology, the agriculture in the early days of the State of Israel was generated by the very ideology and became a real witness of Zionism embodiment being closely connected with the resettlement issue.

Israel had three big goals for agriculture development in the past 60 years and has successfully accomplished all three of them. The first goal was the settlement of migrants in remote, border areas. The second goal was increasing the self-sufficiency level. The third goal was developing export oriented

agriculture which has also become reality in a very short period of time. Israel is exporting \$1.5 billion food and agricultural input supplies to EU, CIS countries, the U.S., Turkey, etc.

After massive and unjustified privatization Armenia has not developed clear vision and goal on how the private agriculture shall look in Armenia and what we want to do with it. Should the government support it or not? Should we grow everything or limit ourselves to the products which can give us comparative advantage in the world market? The same people, who were advocating for agricultural segmentation through distribution of assets to all rural households in early 1990s, today are talking about collective production, cooperative development and uniting small plots for efficiency.

Nevertheless, the production efficiency is not always connected to the size of the farms and the collective form of production. It very much depends on the level of usage of new technologies, national traditions of farming, climate, biodiversity, etc. For example, as opposed to economies of scale in terms of operating large farms in many countries, Austria and many other developed nations continue supporting small farm operations, thus, ensuring rural employment and development and preserving national and rural traditions and diversity. Austria still has about 180,000 farms, and 65 percent of the farms have 3-5 cows with an average annual production of 6,300 liters of milk per cow with higher content of protein and fat.

According to the Swiss constitution, agriculture is required to play an active role in attracting settlement in remote and economically disadvantaged areas (1).

Why are countries like Austria, Switzerland and some other EU countries, which are located in the middle of Europe, so much concerned about promoting rural development, supporting remote villages and keeping agriculture production up? The EU budget for agricultural development and subsidization constituted around 50 billion Euros annually for quite a long time.


Many countries reached the level of sufficiency during “green revolution”. This describes the time when developing countries achieved stunning increase in agricultural production principally by using new varieties of crops, such as wheat, rice and maize, and increasing the use of pesticides and fertilizers combined with mechanization.

The term “green revolution” was first used in 1968 by former USAID director William Gaud, “...developments in the field of agriculture contain the makings of a new revolution... I call it the green revolution.”

But it was American Norman Borlaug who played a pivotal role in developing semi-dwarf, high-yield, disease-resistant varieties of wheat in Mexico, where he established the International Maize and Wheat Improvement Center (CIMMYT) in 1964.

For the last 1000 years, the focus has been on increasing the productivity of each farmer through building better implements, using horses, and the invention of John Deere’s reapers and tractors. But the real gains came with improvement of productivity of the land itself.

The U.S. data analysis of 1948-2004 shows a decrease in some inputs and a significant increase in others, moving from extensive to more intensive farming by reaching 168 percent increase in output. For example, during the mentioned period the labor use in agriculture has decreased by 76 percent and land use by 27 percent. At the same time, the energy use



increased by 6 percent, and chemicals use by around 368 percent.

Across America’s Midwest, farmers are increasingly relying on precision technology, which is called to minimize waste and produce as many crops as possible by ensuring that fields receive the right amount of seeds and fertilizers. Now farmers can keep track of fertilizer utilization volumes and reveal equipment problems by using their smartphones. As recently reported by Wall Street Journal, most of the planting activities are already guided by global-positioning-system, or GPS technology, thanks to which the farmer can manage the whole process straight from his car (2).

In Armenia, grain occupies the biggest amount of agricultural lands. Armenia, on average, cultivates 150-200,000 hectares of grain every year or about 60 percent of all cultivated areas. In terms of production, Armenia produces about 310-400,000 tons of grain, thus, reaching 35-40 percent level of self sufficiency.

Importing high quality seeds is not enough. It is just a small step to increase the wheat yield per hectare. New drought resistant seeds along with modern machinery, new irrigation methods, pest control and fertilization system, right crop rotation and post harvest handling are all important factors of

increasing yield per hectare.

This is a big challenge, which is going to require more than science. It is a communication and a transfer process, helping to put into the farmers' hands the knowledge of improved practices.

Perhaps the most striking trend is the move from "food security" towards "food self-sufficiency," which should be the goal of the national agricultural policy. First, it supposes that everyone has enough to eat; and second, it means growing it yourself.

In 1974 Henry Kissinger, at the time America's secretary of state, declared during the First World Food Conference in Rome that no child would go to bed hungry within the following ten years. 35 years later, right before the week of another United Nations food summit in Rome, there were 1 billion people who went to bed hungry. There are more people who die each year from hunger and malnutrition than from AIDS, tuberculosis and malaria taken together (3).

It looks like agriculture and food security have become the core of the international agenda again. In 2009, the World Bank increased its spending on agriculture by 50 percent by making it \$6 billion. The Islamic Development Bank is forming a department of agriculture for the first time.

In 2010, the U.S. president Barack Obama demanded the Congress to increase America's aid for agricultural development.

During the July meeting in L'Aquila, the large and economically strong Group of Eight (G8) countries promised to increase the spending on agricultural development by \$20 billion over the next three years.

"The world's attention is back on your cause," claimed Bill Gates addressing the agricultural scientists recently gathered to honor the late Norman Borlaug, the father of the "green revolution".

Most governments restart investing into agriculture after 30 years of neglect. Both public and private sectors do more than ever to help the farmers.

In 2011, the president of Armenia Serge Sargsyan announced agriculture as a high priority sector, which will continue being one of the core development directions in the years to come.

Between now and 2050, the world's population will rise by third and reach 9 billion, whereas the demand for agricultural goods will rise 40 percent by 2030 and 70 percent by 2050 and the demand for meat will double.

However, while the demand for food is rising, the amount of land suitable for food production is likely to decrease, mainly due to such factors as urbanization, raising demand for bio-fuel and climate change.

Increasing productivity is not enough. Almost half of the produced food is lost at different stages of food value chain. Food losses in industrialized countries are as high as in developing countries. Nevertheless, in developing countries more than 40 percent of the food losses occur at post harvest and processing levels, while in industrialized countries, more than 40 percent of the food losses occur at retail and consumer levels (FAO). The food waste at consumer level in industrialized countries (222 million tons) is almost as high as the total net food production in sub Saharan Africa (230 million tons) (2).

The food system encounters global crisis. Prices have skyrocketed and are now higher in real terms than any time since



1984 (4). The food crisis and the price increase of 2008 highlighted the stark realities confronting the global food production system. Some of the causes are the rising energy prices, demand for bio-fuels, climate change, market speculation, as well as the changes in dietary patterns in such countries as China and India due to middle class income increase, with hundreds of millions of new consumers who are ready to buy more meat, milk, cheese and other high protein products.

All these factors coupled with under-investment in the agricultural sector in many countries during the last two decades resulted in the price increase and food crisis of 2008. The impact of the food crisis on the world's most vulnerable and poorest people was worsened a few months later with the eruption of the North American financial crisis. Some 100 million people were plunged into food deprivation and poverty.

An economic theory introduced in 1857 by a German statistician Ernst Engel presented wealth effect and the shift in consumption patterns "the income increase affects consumption quality and quantity." According to Bennett's Law (1936), "wealth manifestation and shift from starch to protein will continue regulating food prices and demand."

Armenia depends on global food supply chains and is vulnerable to the political situation in the region and to outbreaks of animal or plant diseases in neighboring countries. We have to be concerned about our vulnerabilities in the global food supply chain. Any global changes in demand and supply will affect the supply curve and the price index in Armenia.

Armenia should find its unique way and place in the world market, by offering high demand products for the season and off season supply and by diversifying its supply markets, which might include apricot and other fresh fruits, greenhouse vegetables, some processed fruits, wine and brandy. Maybe the focus should be made on exporting limited variety of products conforming with international standards and requirements in order to ensure a sustainable supply process?

It is now the time to reinvest in agriculture, food production and nutrition. Research and development, technology transfer, education, and knowledge dissemination are all crucial to alleviating the poverty and hunger experienced by many people in the last two decades.

We have a choice. We can either start changing things now



in the process of creating vision and strategies or it would be hard to overcome barriers in short period of time. Also, the vision and the strategies should not depend on ongoing fluctuations in agricultural management process.

Cultivating more land will require more resources, and we will continue facing old inefficiency problems. Thus, it cannot be considered the right solution, which is to increase the productivity on one hectare of land or per one head of livestock. This is the way to produce more from the less. Growth of Armenia should start from rural communities. In the villages people still remember what motherland is. They still keep and carry on national traditions, values, they respect adults.... They are not aware about profit yet. In cities, the motherland is where profit is.

to overcome some of the great inequalities in food production and develop the disadvantaged and remote areas or continue hoping that the world will feed us by trying to exclude the hunger factor in rural migration. The young generation with Western education and experience should be more involved

References

1. *Methods to Monitor and Evaluate the Impact of Agricultural Policies on Rural Development*. 2009
2. *Duxton's Agri Bits and Pieces; Vol. 66*
3. *Global Food Security, Sustainable Healthy Food for All*. <http://www.foodsecurity.ac.uk>
4. *The Economist; February 26th – March 4th 2011*.





Ավելի քիչ ստանալ ավելի շատ. Հայաստանի պարենի եւ սննդի կենսաբազմազանությունը

Յեղիմյան՝ Գագիկ Սարգսյան, Ագրոբիզնեսի և Գյուղի Ջարգացման Կենտրոն, տնօրեն

ժամանակակից աշխարհում կարևորագույն հիմնախնդիր է հանդիսանում բավարար քանակի պարենի արտադրությունն ու բոլորին սննդամթերքով ապահովելը: Մեր երկրագնդի օրեցօր աճող բնակչությանը կերակրելու համար անհրաժեշտ է մինչ 2050 թվականը ավելացնել պարենի գլոբալ արտադրությունը 70 տոկոսով: Աշխարհի շատ մասերում կանայք գյուղատնտեսական աշխատուժի մեծամասնությունն են կազմում: Սակայն այսօր մեզ չի հաջողվում հասնել լավագույն արդյունքների պարենային արտադրության մեջ կատարվող ներդրումներում, քանի որ շատ կանայք զրկված են հողից, սերմացուներից, ջրից, վարկերից և ձեռնարկատիրությամբ զբաղվելու հնարավորությունից...

- Գլոբալ պարենային անվտանգության գրասենյակ, ԱՄՆ-ի պետքեպարտամենտ

ժամանակակից գյուղատնտեսության պատմությունը սկիզբ է առել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Ջարգացած արդյունաբերական երկրները վերադարձան հետպատերազմյան տնտեսական կյանքին, իսկ զարգացող երկրները, ձեռք բերելով անկախություն, սկսեցին սեփական ուժերով զարգացնել գյուղատնտեսությունը:

Միջազգային քաղաքական և առևտրային հարաբերությունների վերաձևավորման և բնակչության շարունակական աճի պայմաններում շատ երկրներ ձգտում էին սեփական ուժերով բավարարել իրենց տնտեսական պահանջները՝ խուսափելով պատերազմյան տարիներին մի շարք հարուստ երկրներում առաջացած պարենային պակասուրդի խնդրից: Գյուղատնտեսական ճիշտ քաղաքականության, հզոր պետական աջակցության և գյուղատնտեսական զարգացած ավանդույթների շնորհիվ ԱՄՆ և ԵՄ երկրները ոչ միայն հաղթահարեցին պարենային պակասուրդի խնդիրը՝ ապահովելով սեփական պարենային անվտանգություն, այլ նաև առաջատար դեր ստանձնեցին սննդամթերքի արտահանման գործում: Արևմտյան երկրներում պարենային անվտանգության ապահովման նպատակը բոլոր մարդկանց պարենային կարիքների բավարարումն է, որպեսզի յուրաքանչյուր մարդ՝ անկախ եկամտի մակարդակից, կարողանա առողջ սնվել՝ չնտահոգվելով այն մասին, թե երբ է հաջորդ անգամ ճաշելու:

Սպասվում էր, որ 1990-ականների առաջին կեսին ծավալված պատերազմի արդյունքում առաջացած պարենային ճգնաժամից հետո նույն գործընթացը տեղի է ունենալու նաև Հայաստանում: Սակայն վերջին 20 տարիների ընթացքում խաղաղ պայմաններում ապրելուց և բազմաթիվ գյուղատնտեսական բարեփոխումներ իրականացնելուց հետո ռազմավարական նշանակություն ունեցող գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը բավարարում է երկրի պահանջումների ընդամենը 40 տոկոսը: Երկրում շարունակվում է գյուղատնտեսական

արտադրության էքստենսիվ գործընթացը և կախվածությունը պարենային հումքի ներկրումից:

Մեկ հեկտար հողատարածքից տարեկան շուրջ 2 տոննա հացահատիկի արտադրությունը և մեկ կովի 2.000 լիտր կաթնատվությունը գրեթե չի տարբերվում 30 տարի առաջ Հայաստանում և մինչ երկրորդ համաշխարհային պատերազմը շատ երկրներում արձանագրված ցուցանիշներից, որոնց պահպանման դեպքում մոտակա տարիներին Հայաստանում հնարավոր չի լինի հաղթահարել պարենային պակասուրդը: Ներկայումս, ի տարբերություն Հայաստանի՝ զարգացած երկրներում 5-8 անգամ ավելի շատ հացահատիկ է աճեցվում մեկ հեկտարից և 5-8 անգամ ավելի շատ կաթ է ստացվում մեկ կովից:

▶▶ Եթե մտածում եք մեկ տարվա համար, սերմ ցանեք, եթե տաս տարվա համար՝ ծառեր տնկեք, եթե հարյուր տարվա համար՝ մարդկանց կրթեք: -Կոնֆուցիոս ◀◀

Իսրայելում 30 տարիների ընթացքում հաջողվեց կովերի տարեկան կաթնատվությունը հասցնել 10.000 լիտրի: Գյուղատնտեսական ֆերմաների համեմատության միջազգային ցանցի (IFCN) կողմից 2010 թվականին հրապարակված կաթնամթերքի մասին համաշխարհային հաշվետվության համաձայն Իսրայելում առկա 120.000 կովերի կաթի տարեկան արտադրությունը կազմում է 1,2 միլիոն տոննա: Հայաստանում կաթնատու կովերի քանակը գրեթե երեք անգամ ավելի շատ է քան Իսրայելում, սակայն կաթի տարեկան արտադրությունը երկու անգամ ավելի քիչ է: Նույն աղբյուրի տվյալներով Հայաստանում մեկ գյուղատնտեսական ֆերմային միջինում բաժին է ընկնում 1,6 կով: Իսրայելում կաթ արտադրող միջին ֆերման ունի 125 կով, և երկրում առկա բոլոր 120.000 կովերի կիթն իրականացվում է մեքենայական եղանակով:

Կաթնամթերքի արտադրությունը միշտ ծանր աշխատանք է հանդիսացել: Հայաստանի գյուղերում կովերի (ինչպես նաև այծերի ու ոչխարների) կիթը ավանդաբար կանացի գործ է եղել: Կովերի, այծերի և ոչխարների կիթով է զբաղվում ավելի քան 100.000 կին, որոնց 1 տոկոսից քիչն է օգտագործում կթման մեքենաներ: Միջոցների սակավության պատճառով փոքրաթիվ անասնազուխ ունեցող գյուղացիական տնտեսությունները սովորաբար նախընտրում են կիթն իրականացնել ձեռքով՝ անտեսելով սանիտարական նորմերը և անվտանգության կանոնները: Ձեռքով կթելու փոխարեն մեքենայական կիթն անցնելը կարող է բարելավել կաթի որակն ու արտադրանքի անվտանգությունը, բարձրացնել փոքր ընտանեկան տնտեսությունների աշխատանքի արդյունավետությունը, ավելացնել մեկ կովի միջին տարեկան կաթնատվությունը և կրճատել կիթի վրա ծախսվող ժամանակը:

Գյուղատնտեսության համար պիտանի հողատարածքների և ոռոգման ջրի քանակի առումով Հայաստանին զիջող Իսրայելն ընտրել է գյուղատնտեսական զարգացման ուղույն ճանապարհ, որը թույլ է տալիս գրեթե



IT Solutions

for Your Business

www.unicomp.am

37 Charentsi St, Yerevan, 0025, Armenia, Tel.: +374 10 581111, Fax: +374 10 581101

ամբողջությամբ բավարարել սեփական պարենային պահանջները. ընդ որում՝ երկրում արտադրվում է հիմնական գյուղատնտեսական մթերքի մոտ 90 տոկոսը, և այն բավարարում է ավելի քան 8 միլիոնանոց բնակչության պարենային կարիքները:

Ի տարբերություն մի շարք այլ երկրների, որտեղ գյուղատնտեսությունը գրեթե ամբողջությամբ առանձնացված է գաղափարախոսությունից, Իսրայելի պետության կայացման սկզբնական շրջանում գյուղատնտեսությունը վերելք ապրեց գաղափարախոսության շնորհիվ՝ դառնալով երկրի վերաբնակեցման գործընթացում սիոնիզմի մարմնավորման վկան ինչպես ամենօրյա կյանքում, այնպես էլ՝ գյուղատնտեսական զարգացման գործընթացում:

Վերջին 60 տարիների ընթացքում Իսրայելի գյուղատնտեսական զարգացումը հետապնդել է 3 հիմնական նպատակ, որոնք բոլորն էլ հաջողությամբ իրականացվել են: Առաջին նպատակն էր կազմակերպել երկրի հեռավոր և սահմանային տարածքների վերաբնակեցման գործընթացը, երկրորդը՝ ինքնաբավության մակարդակի աճը, երրորդը՝ արտահանմանը միտված գյուղատնտեսության զարգացումը, որը նույնպես իրականություն դարձավ շատ կարճ ժամանակահատվածում: Ներկայումս Իսրայելը արտահանում է 1,5 միլիարդ ԱՄՆ դոլար արժողություն ունեցող սննդամթերք և գյուղատնտեսական հումք ԵՄ-ի և ԱՊՀ-ի երկրներ, ԱՄՆ, Թուրքիա և այլուր:

Ձանգվածային և լուրջ հիմնավորումներ չունեցող սեփականաշնորհման գործընթացի արդյունքում չձևավորվեց որևէ հստակ տեսլական այն մասին, թե ինչպես պետք է զարգացնել մասնավոր գյուղատնտեսությունը Հայաստանում, և ինչ նպատակների այն պետք է ծառայի: Արդյո՞ք պետությունը պետք է օժանդակի այս գործընթացին: Արդյո՞ք պետք է աճեցնել ամեն ինչ, թե անհրաժեշտ է կենտրոնանալ շուկայում համեմատական առավելություն ունեցող արտադրանքի վրա: Այն մարդիկ, ովքեր նախորդ դարի 90-ական թվականների սկզբում կողմ էին գյուղացիական տնտեսությունների ակտիվների վերաբաշխման միջոցով գյուղատնտեսության մասնատմանը, ներկայումս կողմ են կոլեկտիվ արտադրության, կոոպերատիվների ստեղծման և արդյունավետ արտադրության նպատակով փոքր հողատարածքների միավորման գաղափարներին: Սակայն արդյունավետ արտադրությունը ոչ միշտ է ենթադրում խոշոր ֆերմաների և կոլեկտիվ տնտեսության առկայություն: Այն մեծապես կախված է գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառման աստիճանից, ազգային ավանդույթներից, երկրի բնակլիմայական պայմաններից, կենսաբազմազանությունից և այլ գործոններից: Օրինակ՝ ի տարբերություն շատ երկրներում ընդունված խոշոր ֆերմաների շնորհիվ առավելագույն հասույթ ստանալու մոտեցմանը՝ Ավստրիայում և մի շարք այլ զարգացած երկրներում կառավարությունը շարունակում է օժանդակել փոքր ֆերմերներին՝ ապահովելով գյուղական բնակչության զբաղվածությունը, ազգային և գյուղական ավանդույթների պահպանումը, զարգացումը և բազմազանությունը: Ավստրիայում մինչ այժմ գործում են շուրջ 180.000 ֆերմաներ, որոնց 65 տոկոսը ունի 3-5 կով, իսկ միջին տարեկան կաթնատվությունը կազմում է 6.300 լիտր, ընդ որում՝ կաթի սպիտակուցի պարունակության և յուղայնության ցուցանիշները ավելի բարձր են:

Շվեդիայի սահմանադրությամբ ամրագրված է, որ գյուղատնտեսությունն ակտիվ դեր պետք է ստանձնի հեռավոր և տնտեսապես թերզարգացած տարածքների բնակեցման հարցում (1):

Ինչու՞ են Եվրոպայի կենտրոնում գտնվող Ավստրիայում, Շվեյցարիայում և ԵՄ-ի մի շարք այլ երկրներում այդքան



մտահոգված գյուղատնտեսական զարգացմանն օժանդակելու, հեռավոր գյուղերին օգնություն տրամադրելու և գյուղատնտեսության շարունակական աճն ապահովելու խնդիրներով: Երկար տարիներ գյուղատնտեսական զարգացման և սուբսիդավորման գծով ԵՄ-ի տարեկան բյուջեն կազմում էր մոտ 50 միլիարդ Եվրո:

«Կանաչ հեղափոխության» տարիներին շատ երկրների հաջողվեց հասնել սեփական պահանջների բավարարման անհրաժեշտ մակարդակին: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ զարգացող երկրները կարողացան գյուղատնտեսական արտադրության հարցում կտրուկ առաջընթաց արձանագրել՝ զարգացնելով ավանդական հացահատիկային կուլտուրաների՝ ցորենի, բրնձի և եգիպտացորենի նոր տեսակները և մեխանիզացիայի գործընթացին զուգահեռ ավելացնել թունաքիմիկատների կիրառումը:

«Կանաչ հեղափոխություն» հասկացությունն առաջին անգամ կիրառվել է 1968 թվականին ԱՄՆ Ջարգացման գործակալության նախկին տնօրեն Ուիլյամ Գոդի կողմից. «...գյուղատնտեսության ոլորտում զարգացումները նոր հեղափոխության միտում են արտացոլում... Ես այն անվանում եմ կանաչ հեղափոխություն»:

Սակայն այդ գործընթացում առանցքային էր ամերիկացի Նորման Բորլոգի դերը, ով 1964 թվականին Մեքսիկայում հիմնադրեց եգիպտացորենի և հացահատիկի բարելավման կենտրոնը (CIMMYT), որտեղ և մշակեց բարձր արտադրողականություն և դիմացկունություն ունեցող կիսազաճած հացահատիկի նոր տեսակները:

Վերջին հազարամյակում գյուղատնտեսության զարգացման հարցին հիմնական մոտեցումը եղել է յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության արդյունավետության բարձրացումը, որին նպաստել են գյուղատնտեսական գործիքների կատարելագործումը, գյուղատնտեսությունում ձիերի կիրառումը և Ջոն Դիրի կողմից հնձամեքենայի և տրակտորի ստեղծումը: Սակայն իրական օգուտներն ի հայտ եկան հողի արտադրողականության բարելավման արդյունքում:

1948-2004 թվականների ԱՄՆ-ի տվյալների վերլուծությունը վկայում է էքստենսիվ գյուղատնտեսությունից դեպի ինտենսիվ անցում կատարելու մասին, ինչը հնարավոր դարձավ որոշ գյուղատնտեսական ռեսուրսների կրճատման և այլ ռեսուրսների ավելացման շնորհիվ: Դրա արդյունքում գրանցվեց գյուղատնտեսական արտադրության 168



տոկոս աճ: Նշված շրջանում գյուղատնտեսությունում ներգրավված աշխատուժը կրճատվեց 76 տոկոսով, իսկ մշակվող հողատարածքները՝ 26 տոկոսով, սակայն միևնույն ժամանակ էլեկտրաէներգիայի սպառումն աճեց 6 տոկոսով, իսկ քիմիկատների օգտագործումը՝ շուրջ 368 տոկոսով:

Ամերիկայի Միջին Արևմուտքի ողջ տարածքում ֆերմերները մեծ ուշադրություն են դարձնում ճշգրիտ տեխնոլոգիաների կիրառմանը, քանզի վերջիններս հնարավորություն են ընձեռում դաշտերում ավելորդ քանակի սերմերի և քիմիկատների բացառման շնորհիվ նվազեցնել կորուստը և առավելագույն քանակի բերք աճեցնել: Ֆերմերները ներկայումս հնարավորություն ունեն սմարթֆոնների միջոցով վերահսկել թունաքիմիկատների կիրառումը և բացահայտել գյուղատնտեսական մեքենաների անսարքությունները: «Wall Street Journal»-ի համաձայն՝ այսօր ցանքի աշխատանքները հիմնականում վերահսկվում են գլոբալ դիրքակայման GPS համակարգի միջոցով, որի շնորհիվ ֆերմերը կարող է կառավարել ողջ գործընթացը մեքենայի խցիկից (2):

Հայաստանում գյուղական հողատարածքների հիմնական մասը հատկացվում է հացահատիկին: Տարեկան մշակվում է 150-200.000 հեկտար հացահատիկի դաշտ, որը կազմում է գյուղատնտեսության համար պիտանի վարելահողի 60 տոկոսը: Տարեկան արտադրվում է 310-400.000 տոննա հացահատիկ, որը թույլ է տալիս բավարարել պահանջարկի 35-40 տոկոսը:

Բարձր որակի սերմերի ներկրումը բավարար չէ. դա ընդամենը փոքր քայլ է մեկ հեկտարից ստացվող ցորենի արտադրությունն ավելացնելու ուղղությամբ, մինչդեռ արտադրողականության աճն ապահովող կարևորագույն գործոններն են երաշտի պայմաններին դիմադրող նոր սերմատեսակների և ժամանակակից գյուղատնտեսական մեքենաների կիրառումը, ոռոգման արդի մեթոդների և պարարտացման համակարգի ներդրումը, վնասատուների դեմ պայքարը, գյուղատնտեսական կուլտուրաների ճիշտ ռոտացիան և հետբերքահավաքային մշակումը:

Այս լուրջ մարտահրավերը ոչ միայն գիտական նոր մշակումներ է պահանջում, այլ նաև ենթադրում է գյուղական շրջաններում արդի մոտեցումների վերաբերյալ կայնաժամակալ իրազեկման և փորձի փոխանակման աշխատանքների իրականացում:

Հավանաբար մեր օրերի կարևորագույն միտումներից

մեկը «պարենային անվտանգությունից» դեպի «պարենային ինքնաբավարարման» անցումն է, որը պետք է հանդիսանա գյուղատնտեսության ոլորտի պետական քաղաքականության անկյունաքարը: Այն ենթադրում է պարենի ինքնաբավ արտադրություն, ինչպես նաև այն, որ բոլոր մարդիկ ապահովված կլինեն բավարար քանակի սննդով:

1974 թվականին Հռոմում կայացած առաջին պարենային համաժողովում ԱՄՆ պետդեպարտամենտի նախկին քարտուղար Յենի Քիսինջերը հայտարարեց, որ հաջորդ տաս տարիների ընթացքում աշխարհում ոչ մի երեխա քաղցած չի քնելու, սակայն 35 տարի անց պարենային հարցերով ՄԱԿ-ի հերթական հանձնաժողովի նախաշեմին աշխարհում 1 միլիարդ մարդ սովի էր մատնված: Տարեկան սովից և թերսնուցումից ավելի շատ մարդ է մահանում քան ՁԻԱԿ-ից, պալարախտից և մալարիայից միասին վերցրած (3):

Ամենայն հավանականությամբ գյուղատնտեսությունը և պարենային անվտանգությունը կրկին հայտնվել են միջազգային օրակարգի կիզակետում: 2009 թվականին Համաշխարհային բանկը 50 տոկոսով ավելացրել է գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորումը՝ այն հասցնելով 6 միլիարդ ԱՄՆ դոլարի: Իսլամական զարգացման բանկն իր պատմության մեջ առաջին անգամ գյուղատնտեսական վարչություն է կազմավորում:

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Կոնգրեսից պահանջել է 2010 թվականին ավելացնել գյուղատնտեսական զարգացմանն ուղղված օգնությունը:

Լաքսիլա քաղաքում կայացած հզոր տնտեսություն ունեցող խոշոր երկրների ութնյակի (G8) հանդիպման ժամանակ վերջիններս պարտավորություն ստանձնեցին հաջորդ երեք տարիների ընթացքում գյուղատնտեսական զարգացման գծով ծախսերն ավելացնել 20 միլիարդ ԱՄՆ դոլարով:

«Աշխարհը կրկին անդրադարձել է ձեր խնդրին». այսպիսի հայտարարությամբ հանդես եկավ Բիլ Գեյթսը «կանաչ հեղափոխության» հայր Նորման Բորլազի հիշատակին նվիրված գյուղատնտեսական ոլորտի գիտնականների հանդիպման ժամանակ:

30 տարիների ընթացքում գյուղատնտեսության ոլորտն անտեսելուց հետո շատ երկրների կառավարություններ վերսկսեցին գյուղատնտեսության մեջ ներդրումներ կատարելու գործընթացը: Այդ երկրների ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածների ներկայացուցիչներն ավելի շատ քայլեր են ձեռնարկում ֆերմերներին օժանդակելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը գյուղատնտեսությունը հայտարարել է 2011 թվականի գերակա ոլորտ, որը շարունակելու է կարևորվել մոտակա տարիների ընթացքում: Մինչև 2050 թվականը ընկած ժամանակահատվածում երկրագնդի բնակչությունն աճելու է մեկ երրորդով՝ հասնելով 9 միլիարդի, մինչդեռ պարենային ապրանքների պահանջարկը 2030 թվականին աճելու է 40 տոկոսով, 2050 թվականին՝ 70 տոկոսով, իսկ մասնաբերքի պահանջարկը կրկնապատկվելու է:

Չնայած սննդամթերքի նկատմամբ պահանջարկն աճում է, այն արտադրելու համար պիտանի հողատարածքները հավանաբար կկրճատվեն, ինչը հիմնականում պայմանավորված կլինի այնպիսի գործոններով ինչպիսիք են ուրբանիզացիան, բիովառելիքի նկատմամբ աճող պահանջարկը և տեղի ունեցող կլիմայական փոփոխությունները:



Արտադրողականության բարձրացումը բավարար չէ: Արտադրվող սննդամթերքի գրեթե կեսը մենք կորցնում ենք արտադրական և սպառման շղթայի տարբեր օղակներում: Ջարգացած արդյունաբերական երկրներում սննդամթերքի կորուստի մակարդակը չի տարբերվում աղքատ երկրների մակարդակից: Այնուամենայնիվ, զարգացող երկրներում կորստի ավելի քան 40 տոկոսը առաջանում է վատ բերքի և անբավարար մշակման արդյունքում, մինչդեռ զարգացած երկրներում այն առաջանում է մանրածախ առևտրի և սպառման փուլերում (ըստ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տվյալների): Ջարգացած երկրներում սպառման փուլում առաջացող սննդամթերքի կորուստը (222 միլիոն տոննա) գրեթե հավասար է աֆրիկյան մայրցամաքի Սահարայի ենթաշրջանի երկրներում պարենի զուտ արտադրությանը (230 միլիոն տոննա) (2):

Պարենի համակարգն ամբողջ աշխարհում թևակոխել է ճգնաժամային իրավիճակ: Տեղի է ունեցել գների սրընթաց աճ, որի արդյունքում արձանագրվել են 1984 թվականից ի վեր ամենաբարձր գները (4): 2008 թվականի պարենային ճգնաժամը և գնաճը կրկին խաթարել են գլոբալ պարենի արտադրության իրավիճակը: Դրա պատճառներն են էներգետիկ ռեսուրսների բարձր գները, բիովառելիքի պահանջարկի աճը, կլիմայական փոփոխությունները, շուկայական շահարկումները, ինչպես նաև միջին դասին պատկանող բնակչության եկամուտների աճի հետևանքով սնման նախընտրությունների փոփոխությունը Չինաստանում և Հնդկաստանում, որտեղ միլիոնավոր նոր սպառողներ պատրաստ են գնել ավելի մեծ քանակությամբ մսամթերք, կաթ, պանիր և սպիտակուցի բարձր պարունակություն ունեցող այլ մթերքներ:


- **Wrong calculations**

Potential member-stakeholders and cooperative managers often overestimate the potential volumes of business and underestimate operational expenses. When instead of expected success, the business encounters failure, the organizers appear in a negative light.

- **Absence of funding**

A great number of new businesses are underfunded. The reasons for this are mainly due to ineffective operation, competition, breach of regulations, and delays. The first months and even years of operating the cooperative may yield no profit whatsoever and, thus, create need for appropriate funding to cover for this period.

- **Inadequate communication**

During the initial stages of organizing the cooperative, it is extremely important to constantly keep the members, suppliers, and those who fund the initiative informed. The absence of accurate information and insufficient transparency result in aversion or suspicion. The Directors and management shall decide on how to disseminate information and determine who should receive the communication.



▶▶ 2012 թվականը ՄԱԿ-ի կողմից հայտարարված է Կոոպերատիվների միջազգային տարի: Տարվա լոգոտիպում պատկերված են մարդկային յոթ կերպարներ, որոնք համատեղ աշխատում են, որ գլխավերևում պահեն խորանարդը: Յոթ կերպարները խորհրդանշում են կոոպերատիվի յոթ սկզբունքները և ներկայացնում կոոպերատիվ մոդելում առանցքային դեր ունեցող մարդկային գործոնը: Խորանարդը խորհրդանշում է ծրագրային տարբեր նպատակներն ու ձգտումները, որոնց շուրջ կառուցվում է կոոպերատիվը, ինչպես նաև՝ իրականացվելիք նվաճումները:

Կոոպերատիվների միջազգային տարվա կարգախոսն է՝ «Կոոպերատիվ ձեռնարկությունները կառուցում են ավելի լավ աշխարհ»: Կարգախոսը հիշեցնում է այն կարևոր ներդրումները, որ կոոպերատիվները կարող են ունենալ և ունենում են հասարակության բոլոր խավերի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

Կոոպերատիվների միջազգային տարվա լոգոտիպը հանդիսանում է ՄԱԿ-ի սեփականությունը: ՄԱԿ-ի կողմից լոգոտիպի օգտագործման իրավունք է տրվել ICARE հիմնադրամին (թույլտվություն թիվ 20110613011):



COOPERATIVE ENTERPRISES BUILD A BETTER WORLD



BUILDING ON FIRST MOVER SUCCESS



GEOTEAM

Geoteam CJSC
Nalbandyan 48/1
Sakharov Business Centre, 6 floor
Yerevan 0010, Armenia

Tel./Fax: +374 10 546037, 586037

www.geoteam.am



Lydian International Limited
1st Floor, Capstan House
La Route Es Nouveaux, St. Helier
Jersey JE2 4ZJ, Channel Islands

Tel: +44 1534 715 472

www.lydianinternational.co.uk

Ի՞նչ է անհրաժեշտ կոոպերատիվ ձևավորելու համար



Վարդան Ուռուտյան, Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE), տնօրեն

Կոոպերատիվի ձեռնարկումը

Պայմանավորվածությամբ կոոպերատիվ սկսելու պայմաններից մեկը շահագրգիռ ֆերմերների խմբի առկայությունն է, ովքեր ցանկություն ունեն իրենց առջև ծառայած խնդիրներին համատեղ լուծում գտնելու նպատակով հանդես գալ տնտեսական նախաձեռնությանը: Ի տարբերություն ներդրողների վրա հիմնված ընկերությունների՝ կոոպերատիվները ոչ թե ձգտում են ունենալ բիզնեսի հնարավորություն, որն իրենց համար կապահովի ներդրումների դիմաց ամենաբարձր հատույցը, այլ ձգտում են տնտեսական այնպիսի համատեղ ձեռնարկի, որը կաջակցի իրենց գյուղատնտեսական գործունեությանը և հնարավորություն կստեղծի լրացուցիչ եկամուտ ստանալու համար: Սակայն կոոպերատիվ ձևավորելու տնտեսական շարժառիթը պետք է հիմնված լինի նույն

Կոոպերատիվին միանալ-չմիանալու հարցում որոշում ընդունելիս հաճախ կարևոր դեր են կատարում կանայք: Կոոպերատիվներում կանանց մասնակցության և առհասարակ գյուղատնտեսության ոլորտում նրանց ընդգրկվածության միջև խիստ անհամաչափություն կա: Յետևաբար, կարևորվում է կանանց հնարավորինս լայն չափով ընդգրկումը քննարկումների հենց սկզբնական փուլերում՝ նրանց լիարժեք աջակցությունն ու ակտիվ մասնակցությունն ապահովելու նպատակով:

Կոոպերատիվ ձեռնարկության ստեղծումը հաճախ ժամանակատար և բարդ գործընթաց է: Կազմակերպության կառուցվածքն ու կառավարումը պետք է համապատասխանի անդամների կարողություններին ու ռեսուրսներին: Եթե անդամները փորձառու չեն կոոպերատիվ գործունեության բնագավառում և սահմանափակ կազմակերպչական կարողություններ ունեն, ապա գերադասելի է նախաձեռնել մեկ պարզագույն նպատակ (օրինակ՝ անդամների կողմից աճեցվող որևէ մշակաբույսի համար գյուղատնտեսական ներդրանքների մատակարարում) հետապնդող կոոպերատիվ:

▶▶ Կոոպերատիվ կազմավորելու վերաբերյալ որոշում կայացնելիս հիմնարար նշանակություն ունի անդամների կողմից այն փաստի հասկացողությունն ու ընդունումը, որ կոոպերատիվն իրենց սեփականությունն է և ենթակա է իրենց կողմից վերահսկման: ◀◀

նկատառումների վրա, ինչ՝ որևէ այլ բիզնես սկսելու դեպքում:

Կոոպերատիվ ձևավորելիս, հնարավոր անդամները նախ քննարկում են իրենց կարիքներն ու ընդհանուր շահերը, փնտրում իրենց խնդիրները լուծելու հնարավոր այլընտրանք: Կոոպերատիվ բիզնես սկսելու մասին որոշում կայացնելուց հետո նրանք քննարկում են ապագա գործունեության նպատակը, աշխատանքի ընդգրկման շրջանակը և անդամների համար հնարավոր առավելությունները:

Մեկնարկային փուլում կարևորվում է բավարար խարիզմա ունեցող և արդյունավետ աշխատող մեկ կամ երկու ղեկավարի առկայությունը: Ղեկավարները կոոպերատիվ ձեռնարկումների շարժիչ ուժն են: Նրանք կարող են հասնել մասնակիցների միջև փոխհամաձայնության՝ անդամների թե՛ շահերի, և թե՛ կարիքների առումով: Ձեռնարկության զարգացման համար կոոպերատիվի հնարավոր անդամները պետք է հասկանան և ընդունեն բիզնեսով զբաղվելու սոցիալական և տնտեսական սկզբունքները կոոպերատիվ կազմակերպությունում: Այս իսկ պատճառով անդամները պետք է զմահատեն նոր բիզնեսի կենսունակությունն ու հնարավոր օգուտները և համաձայնության գան այն հարցի շուրջ, որ եղած ռիսկերի և ծախսերի դիմաց համարժեք հատույցներ են ակնկալվում: Կոոպերատիվ կազմավորելու վերաբերյալ որոշում կայացնելիս հիմնարար նշանակություն ունի անդամների կողմից այն փաստի հասկացողությունն ու ընդունումը, որ կոոպերատիվն իրենց սեփականությունն է և ենթակա է իրենց կողմից վերահսկման: Խումբը պետք է համոզվի, որ կոոպերատիվ բիզնեսի ձևը ցանկալի է և պրակտիկ:

Կոոպերատիվի անդամ դառնալու համար անհրաժեշտ է նվիրված լինել կազմակերպությանը, ինչպես նաև ակտիվորեն օգտվել կոոպերատիվի ծառայություններից և արտադրանքից: Անհմաստ է ունենալ ոչ նվիրյալ անդամներ, ովքեր նաև ակտիվորեն չեն օգտվում կոոպերատիվի ծառայություններից: Պասիվ անդամները նսեմացնում են կոոպերատիվի դերը. այդպիսիները չպետք է մասնակցեն:

Վերոնշյալ բոլոր խնդիրները և դրանց հետ կապված հարցադրումները, այդ թվում՝ ակտիվ անդամակցության չափանիշներն ու կանոնները, պետք է քննարկել նախքան կոոպերատիվի հիմնումը:

Նվիրված առաջնորդներ

Կազմակերպության ներսում առաջնորդության զարգացման հարցը կարևորագույն առաջադրանքներից մեկն է, քանի որ անդամների մեծ մասը նախկինում ավելի մեծածավալ բիզնես չի ղեկավարել: Առաջնորդությունը ամենևին էլ մեկ անձի գործը չէ. այն պետք է ապահովել և կազմակերպել կոոպերատիվի բոլոր օղակներում: Յուրաքանչյուր կոոպերատիվի ապագան կախված է ակտիվ և նվիրված առաջնորդների բացահայտումից և զարգացումից: Ընդ որում, ակտիվ անհատների ու հնարավոր առաջնորդների բացահայտումը պետք է կատարել վաղ փուլում: Այդ մարդիկ պետք է համապատասխան վերապատրաստում անցնեն և պրակտիկ փորձ ձեռք բերելու հնարավորություն ու գիտելիքները կարողանան ծառայեցնել կոոպերատիվի տարաբնույթ գործառույթներում ու պաշտոններում անհրաժեշտ առաջնորդություն ապահովելու գործին: Կանոնավոր վերապատրաստման հնարավորություններ պետք է ստեղծել բոլոր այն անդամների համար, ովքեր

ցանկություն ունեն ընդգրկվելու կոոպերատիվի խորհրդում, հանձնաժողովներում կամ աշխատանքային խմբերում:

Կոոպերատիվի գործունեության հաջողության առումով կարևոր նշանակություն ունի բարձր որակավորում ունեցող ղեկավարության հետ մեկ թնով արդյունավետ աշխատող տնօրենների խորհուրդը, ընդ որում՝ ոչ միայն մեկնարկային փուլում, այլ նաև հետագա զարգացման ընթացքում: Իրենց մանդատների շրջանակում ղեկավարությունն ու խորհուրդը պետք է ունենան բավականաչափ ազատություն կոոպերատիվն իր անդամների շահերին լավագույնս ծառայեցնելու համար:

Հաջողությանը նպաստող այլ գործոններ

Նվիրյալ անդամներ և առաջնորդներ ունենալուց գատ, գոյություն ունեն հինգ հիմնական գործոններ, որոնք պետք է հաշվի առնվեն նախաձեռնողների կողմից կոոպերատիվ հիմնելու ժամանակ: Այդ գործոններն են. շուկան, տեխնիկատնտեսական հնարավորությունը, օրենսդրական դաշտը, ֆինանսավորումը և կազմակերպական կառուցվածքը:

Գոյություն ունեցող և ապագա շուկայական պայմաններն ու հնարավորությունները պետք է մանրակրկիտ կերպով ուսումնասիրվեն, քանի որ կոոպերատիվի հաջողումը կամ ձախողումը մեծապես կախված է դրանցից: Կոոպերատիվը մասշտաբի ֆեկտի կարող է հասնել անձնակազմի ուժերը, սարքավորումները կամ այլ ռեսուրսները լավագույնս օգտագործելու, ինչպես նաև ֆինանսական բեռը բաժանելու ու ռիսկը կառավարելու միջոցով:

Անհրաժեշտ է պատշաճ կերպով գնահատել բիզնեսի տեխնիկատնտեսական հնարավորությունը:

Պետք է վերլուծել հնարավոր ռիսկերը, որպիսիք են՝ տեխնոլոգիական, քաղաքական, կազմակերպական, ֆինանսական և շուկայական ռիսկերը ու դրանք հաղթահարելու և կառավարելու համար ստեղծել հիմնական ռազմավարություն: Անհրաժեշտ է ստեղծել թե՛ երկարաժամկետ, և թե՛ կարճաժամկետ տեսլականն արտացոլող գործարար ծրագիր, ինչպես նաև սահմանել մերդրումների պահանջվող մակարդակը:

Կարևոր նշանակություն ունի նպաստավոր և աջակցող իրավական դաշտի կամ օրենսդրության առկայությունը: Սա նշանակում է, որ ֆերմերների խմբերի համար չկան իրավական, վարչական կամ քաղաքական արգելքներ իրենց իսկ ղեկավարներին ընտրելու և կոոպերատիվ կազմակերպություն հիմնելու համար:

Սովորաբար նորաստեղծ կոոպերատիվները մեծ դրամական միջոցների կարիք ունեն: Այդ միջոցների ձեռքբերումը կարելի է ապահովել երեք աղբյուրներից՝

- անդամներից,
- կոոպերատիվի ստացած «ավելցուկներից»,
- արտաքին աղբյուրներից:

Անդամների կողմից ֆինանսավորումն առավել կարևոր աղբյուրն է, հատկապես՝ կոոպերատիվի գործունեության մեկնարկային փուլում: Անդամների կողմից բավարար ֆինանսավորման պարագայում ավելի հեշտ կլինի լրացուցիչ արտաքին ֆինանսավորման (օրինակ՝ վարկերի) ներգրավումը: Հաճախ դժվար է լինում բավականաչափ ֆոնդեր հայթայթել բացառապես միայն անդամներից: Հնարավոր մարտահրավերներից մեկը կարող է լինել այն հանգամանքը, որ ակնկալվող ֆինանսական հատուցումները ստացվում են միայն որոշ ժամանակ անց, երբ կոոպերատիվը գործում է լիարժեք և շահույթ է ստանում: Սրա համար կարող են տարիներ պահանջվել: Այս իսկ պատճառով անդամները պետք է լինեն համբերատար և կամքի ուժ ցուցաբերեն իրենց ներդրումների դիմաց շահույթ ստանալու սպասելիքները հետաձգելու համար:

Կոոպերատիվը կարող է պարտք վերցնել, օրինակ՝ բանկերից, ընդ որում պարտքի թույլատրելի կամ ցանկալի չափը կախված է այն բանից, թե անդամներն ինչպիսի ռիսկի են դիմում կամ սկզբնապես որքան սեփական միջոցներ են ներդրում ձեռնարկության կանխիկ դրամազևի, կառավարման որակի և ռիսկի աստիճանի գործում: Անդամների կողմից ներդրվող սեփական կապիտալը պետք է կազմի պահանջվող ընդհանուր կապիտալի առնվազն կեսը: Սակայն սովորաբար այս ցուցանիշը ձեռք է բերվում գործունեության մի քանի տարվա ընթացքում:

Կոոպերատիվը տվյալ միջավայրում և առկա շուկայական պայմաններում իր առջև դրված նպատակներին հասնելու համար պետք է առավել գործնական և արդյունավետ ձևով ընտրի և զարգացնի իր կազմակերպական կառուցվածքը: Համապատասխան կազմակերպական կառուցվածքի և բիզնեսի մեթոդի համար համապարփակ մոնիթորինգն է: Դրանք սահմանվում են անդամների կողմից: Յուրաքանչյուր կոոպերատիվ պետք է մշակի իր ինքնավար կառուցվածքը՝ կախված կազմակերպության առևտրային նպատակներից և շուկայական այն պայմաններից, որոնցում գործում է տվյալ ձեռնարկությունը:

Հնարավոր ծուղակները

Նոր կոոպերատիվ գործարկելիս զգալի ժամանակ և ջանքեր են օգտագործվում: Բոլոր նորաստեղծ մարմինների պես՝ կոոպերատիվները նույնպես խոցելի են իրենց ձևավորման փուլում: Տեղեկացված լինելով այլ կոոպերատիվներին պատահած ծուղակների մասին՝ մենք կարող ենք խուսափել դրանցից՝ այդպիսով մեծացնելով հաջողության մեր հնարավորությունը: Ստորև բերում ենք ծուղակների մի քանի հնարավոր օրինակներ և խորհուրդներ՝ դրանցից խուսափելու համար:

- Հստակ սահմանված նպատակների և ռազմավարության բացակայությունը

Նոր կոոպերատիվը չպետք է հիմնվի հանուն հիմնելու գաղափարի: Տվյալ ձեռնարկի հստակ տեսլականը, գերնպատակը և հիմնական նպատակները, այդ թվում՝ այդ նպատակներին հասնելու համար հաստատված ռազմավարությունը պետք է բացահայտել և ձևակերպել

▶▶ Նոր կոոպերատիվը չպետք է հիմնվի հանուն հիմնելու գաղափարի: Տվյալ ձեռնարկի հստակ տեսլականը, գերնպատակը և հիմնական նպատակները, այդ թվում՝ այդ նպատակներին հասնելու համար հաստատված ռազմավարությունը պետք է բացահայտել և ձևակերպել հնարավոր անդամ-շահառուի կողմից: ◀◀



հնարավոր անդամ-շահառուի կողմից:

- Ոչ համարժեք պլանավորումը

Կոոպերատիվի կողմից սահմանված նպատակներին հասնելու համար կարևոր է կազմել մանրամասն պլաններ: Անդամ-շահառուների կարիքները գնահատելու համար հաճախ անհրաժեշտ է լինում կատարել խորքային ուսումնասիրություններ (օրինակ՝ հարցաթերթերի, ֆերմերային տնտեսություններում անցկացվող հարցումների միջոցով)՝ դրանք զուգակցելով հնարավորությունների ուսումնասիրությունների հետ: Եթե հնարավոր անդամ-շահառուները բավարար հետաքրքրություն չեն ցուցաբերում, կամ՝ եթե ընտրված կառուցվածքային ձևը տնտեսապես ձեռնտու չէ, կամ էլ՝ չափազանց ռիսկային, ապա կոոպերատիվի կազմակերպման գործընթացը պետք է դադարեցվի:

- Փորձառու խորհրդատուների ներգրավումը

Կոոպերատիվ ստեղծելու ցանկություն ունեցող մարդկանց մեծ մասը կոոպերատիվ բիզնես զարգացնելու փորձառություն չունի: Կոոպերատիվների զարգացման գործում փորձառու մարդկանց ներգրավման շնորհիվ հնարավոր կլինի շատ ժամանակ և ծախսեր խնայել:

- Առաջնորդների բացակայությունը

Կազմակերպիչների խմբի ներսում եղած առաջնորդները չեն կարող փոխարինվել փորձառու անձանց ներգրավմամբ: Որոշումների հեղինակներն են հնարավոր անդամ-շահառուների խումբը և նրանց առաջնորդները: Դրսից հրավիրվող մասնագետները չպետք է ներգրավվեն որոշումների կայացման գործընթացում:

- Անդամների պարտավորվածության զգացողության բացակայությունը

Հաջողության հասնելու համար նորաստեղծ կոոպերատիվը պետք է մեծ աջակցություն ստանա հնարավոր անդամ-շահառուների կողմից: Վարկատուների, իրավաբանների, հաշվապահների, կոոպերատիվների մասնագետների և մի քանի ղեկավարների կողմից տրամադրվող աջակցությունը դեռեվա չի նշանակում, որ կոոպերատիվ բիզնեսի հաջողությունն ապահովված է:

- Չեռնհաս կառավարման բացակայությունը

Կոոպերատիվի անդամների մեծ մասը հիմնա-

կանում զբաղված է լինում իր սեփական տնտեսությունում աշխատելով և չունի կոոպերատիվի կառավարման փորձ: Բիզնեսը հաջող կառավարելու նպատակով կարելի է վարձել փորձառու և որակավորված ղեկավար անձնակազմ:

- Ռիսկերը բացահայտելու և դրանք նվազեցնելու անկարողությունը

Նոր բիզնես սկսելու հետ կապված ռիսկերը կարելի է կրճատել, եթե դրանք բացահայտվեն կազմակերպական գործընթացի սկզբնական փուլերում: Ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ է ուսումնասիրել մրցակիցների գործունեությունը, պետական կանոնակարգերը, զարգացման միտումները, բնապահպանական հարցերը և այլընտրանքային գործելակերպերը:

- Սխալ հաշվարկները

Կոոպերատիվի ղեկավարները ու հնարավոր անդամ-շահառուները հաճախ գերազնահատում են բիզնեսի հնարավոր ծավալները և թերագնահատում գործառնական ծախսերը: Երբ բիզնեսում ակնկալվող հաջողության փոխարեն ծախսողում է տեղի ունենում, ապա կազմակերպիչների մասին բացասական կարծիք է ձևավորվում:

- Ֆինանսավորման բացակայությունը

Մեծ թվով նոր բիզնեսներ լինում են թերֆինանսավորված: Հաճախ դա տեղի է ունենում նոր մեկնարկող գործունեության անարդյունավետության, մրցակցության, կանոնակարգերին չհետևելու և ձգձգումների հետևանքով: Կոոպերատիվի գործունեության առաջին ամիսները և նույնիսկ առաջին տարիները կարող են լինել ոչ շահութաբեր, այնպես որ այդ ժամանակամիջոցում անհրաժեշտ է ունենալ համարժեք ֆինանսավորում:

- Ոչ համարժեք հաղորդակցությունը

Կոոպերատիվի կազմակերպման և գործունեության սկզբնական փուլերում խիստ կարևոր է մշտապես տեղեկացված պահել կոոպերատիվի անդամներին, մատակարարներին և ֆինանսավորողներին: Ճշգրիտ տեղեկատվության բացակայությունն ու վերջինիս ոչ բավարար թափանցիկությունը հակակրանք կամ կասածանություն են առաջացնում: Տնօրեններն ու ղեկավարությունն են որոշում, թե ում և ինչպես պետք է հասցեագրվի հաղորդակցությունը:



Comparative Picture of Agriculture in our Region

By Alexander Aramyan

Each of Armenia's neighbors devotes serious attention to agricultural development. In each of these countries, a high proportion of labor is involved in agriculture, even though the share of agriculture in GDP is not significant. This confirms the fact that agricultural productivity is not high as compared with other branches of the economy. Only this year did Armenia proclaim agriculture as a priority in its development direction, but it lags behind its neighbors in terms of the scale of state assistance to this sector. This is in case when being involved in agriculture is extremely difficult in Armenia due to its rugged terrain and severe climatic conditions. This partly explains the high costs of Armenian agricultural products as compared to those in neighboring countries. Turkey and Azerbaijan have the most favorable conditions to promote agriculture, but at the same time they do not want to move away from their state assistance schemes.

It should be noted, however, that the movement of agricultural products between neighboring countries is not that active, even though all of them are product exporters. Thus, Turkey and Georgia are mostly interested in the European, Armenia and Azerbaijan in Russian, and Iran in the Middle East markets.

The following are the brief characteristics of agriculture in the countries of the region.

Turkey

Turkey is one of the few countries in the world, which has reached almost 100 percent self-sufficiency in terms of food provision. This has been achieved due to the country's fertile lands, mild climate and abundant precipitation, which sets the ground for growing almost any agricultural crop. In 2010, agricultural products in Turkey accounted some \$62 billion against the level of \$24 billion in 2002. In 2010, Turkey exported agricultural products with a value of \$5 billion, as compared with the \$1.7 billion in 2002.

Twenty-five percent of the country's labor force is involved in agricultural activities, and agriculture accounts for 8.4 percent of Turkey's Gross Domestic Product (GDP). The main branch of agriculture in Turkey is crop production, which accounts for around 67 percent of overall agricultural produce, while animal husbandry accounts for 27 percent, with the rest going to forestry and fishing. Turkey mainly exports grain crops (wheat, corn), legumes, technical crops (sugar beet, cotton, tea, and tobacco), nuts, as well as fresh and dried fruits. The main export directions are Europe, the U.S., and Middle Eastern countries. The country is classified as one of the ten largest food exporters. Turkey's territory comprises 78 million hectares, which equals Great Britain and France

combined and 40 percent of this territory is used for agricultural purposes.

It should also be noted that Turkey is among the world's five largest grape producers, manufacturing between 3.2 and 3.6 million tons of grape annually. Turkey is also famous for its dried fruits. The whole apricot harvest is used for making dried fruits, out of which 95 percent is exported. Another developed manufacturing branch is frozen fruits and vegetables, with between 75-80 percent of the produce exported.

Turkey holds a prevailing position in the international market in terms of apricots, raisins, and nuts. It also has wide spread production of citrus plants and tea.

Turkey also has around 59 million heads of cattle, 12 million of which are bovine animals. Nevertheless, in recent years, Turkey has encountered a decline in animal husbandry, which is conditioned by non-effective state assistance to this sector.

One of the reasons of the relatively under-developed state of animal husbandry is the obstacles related to European Union meat and livestock exports, as well as more rapid increases in crop production prices.

Turkey has a general program of agricultural subsidization. For example, if the farmer cultivates one hectare of land, he will be subsidized at a rate of \$90 and also receive around \$14 in compensation for diesel oil related expenses. Around 90 percent of farms make use of the subsidies, but this also yields negative results for the small farms, cultivating the most part of the lands, which become dependent on the subsidies and without them, their activities become endangered.

Iran

The agricultural sector in Iran is notable for the low level of marketability. One quarter of the country's capable population is involved in agriculture, but the food self-sufficiency level is not high, constituting only around 75 percent. The share of agriculture in GDP is around 11 percent. During recent years, the government of Iran has been devoting serious attention to promoting agriculture. It has raised the level of the subsidies to almost \$1 billion annually, banned the import of all types of fruits for fifty years, and provided state support to exporters. The country has reached the level when the wheat and potato demand is fully satisfied from local production. Starting from 2010, wheat is also exported (including to Armenia.)

Iran uses around 10 percent of its territory for agricultural purposes. These are in particular northern territories located near the Caspian Sea. The reason for this is the desert and forest terrain, as well as deficiencies in the irrigation network. According to some estimates, Iran has 51 million hectares of

the movement of agricultural products between neighboring countries is not that active, even though all of them are product exporters. Thus, Turkey and Georgia are mostly interested in the European, Armenia and Azerbaijan in Russian, and Iran in the Middle East markets.



lands which are good for agriculture, but it actually uses only 15 million hectares.

Crop production is the basis of Iranian agriculture. Currently, Iran is one of the largest producers in the world of a number of agricultural crops. Iran accounts for 80 percent of the world production of saffron (spice type), 60 percent of the world production of pistachio, 17 percent of the world production of date, 12 percent of the world production of nuts, 8.5 percent of the world production of apricots, and 8 percent of the world production of lemons.

The animal husbandry sector is relatively underdeveloped, providing around 37 percent of agricultural products. The main breeding animals are sheep, goat and a limited numbers of bovine animals.

Georgia

In general, Georgian agriculture has a low productivity. Fifty percent of the labor force is employed in agriculture, eventually providing only 12 percent of GDP. Only 16 percent or 562,000 hectares are used for agriculture, with the most important areas being tea and citrus plants manufacturing and grape growing. During the recent period, more attention has been paid to grain crops cultivation. As of today, only 30 percent of the wheat demand is met by internal manufacturing sources. In 2008, agricultural products in Georgia constituted \$1.3 billion, 55 percent of which accounted for animal husbandry. With the purpose of fully realizing the country's agricultural potential, in 2006 the World Bank implemented a project on building and upgrading the companies involved with processing agricultural raw materials.

In addition, the U.S. and the European Union provide significant financial assistance to the Georgian agricultural sector, accounting for \$270 millions annually. As of today, the level of Georgian agricultural products' marketability is extremely low. Only 28 percent of the village products appear in the free market, with the rest going for household use. It is interesting that during Soviet times, the marketability level of Georgian villages was several times higher.

Azerbaijan

In 2010, the agricultural sector in Azerbaijan provided for 5.4 percent of GDP or 12 percent of the non-oil sector of the economy. Agricultural products' manufacturing in 2010 constituted \$2.8 billion. Thirty-eight percent of the population is employed in the agricultural sector. Azerbaijan is one of the few countries which preserved the Soviet system of agricultural operation, with agricultural activities mainly implemented by state or collective farms. There are 2300 collective agricultural companies and 2700 private farms operating in the country. As a result of preserving the Soviet structure, productivity in the agricultural sector is extremely low, even though the country has fertile lands and a favorable climate.

It should be noted that Azerbaijan was providing 10 percent of agricultural products in the former Soviet Union. It currently exports between 60-70 percent of its agricultural products to Russia. Fifty-five percent of the country's territory is good for agricultural activities, and even though favorable climate conditions exist, the government still provides significant funding to this sector. The state budget allocates \$192 per each hectare of land with agricultural purposes. The 2012 state budget envisages \$600 million in funding to the agricultural sector. This sector is fully exempt from taxes, including land tax.

Տարածաշրջանում գյուղատնտեսության համեմատական պատկերը

Հեղինակ՝ Ալեքսանդր Արամյան

Չայաստանի հարևան բոլոր պետությունները հսկայական ուշադրություն են դարձնում գյուղատնտեսության զարգացմանը: Բոլոր երկրներում աշխատուժի զգալի հատվածը ընդգրկված է գյուղատնտեսությունում, սակայն ՀՆԱ-ի ցուցանիշում գյուղատնտեսության մասնաբաժինը բարձր չէ: Սա վկայում է այն մասին, որ գյուղատնտեսության արդյունավետությունը՝ համեմատած այլ ճյուղերի հետ, բարձր չէ:

Չայաստանը միայն այս տարի ընդունեց, որ գյուղատնտեսությունը զարգացման գերակա ուղղություն է, որը գյուղատնտեսության պետական աջակցման մասշտաբով դեռևս զգալիորեն զիջում է իր հարևաններին: Սա այն դեպքում, երբ Չայաստանում գյուղատնտեսությունը արդյունաբերության ամենաբարձր ճյուղերից մեկն է՝ տեղանքի կրտորվածության և բընակլիմայական պայմանների խստության պատճառով: Մասամբ դրանով է պայմանավորված այն, որ հայկական գյուղմթերքն ավելի բարձր ինքնարժեք ունի, քան հարևան երկրների գյուղմթերքը: Թուրքիան ու Ադրբեջանն ունեն գյուղատնտեսության զարգացման համար ամենամասշտաբավոր բնակլիմայական պայմանները տարածաշրջանում, սակայն պետական աջակցությունից հրաժարվել չեն ցանկանում:

Նշենք, սակայն, որ գյուղատնտեսական մթերքների շարժը հարևան պետությունների միջև այնքան էլ ակտիվ չէ, թեև բոլոր երկրներն էլ գյուղմթերքներ արտահանողներ են: Թուրքիային ու Վրաստանին առավել հետաքրքիր է եվրոպական շուկան, Չայաստանին ու Ադրբեջանին՝ ռուսականը, Իրանին՝ մերձավորարևելյանը:

Ստորև ներկայացնում ենք տարածաշրջանի երկրների գյուղատնտեսության համառոտ բնութագրերը:

Թուրքիա

Թուրքիան աշխարհի այն քիչ պետություններից է, որ պարենային ապահովվածության առումով հասել է 100% ինքնաբավության: Դրան նպաստում են բարեբեր հողերը, մեղմ կլիման և առատ տեղումները, ինչը հնարավորություն է տալիս մշակել զրեթե ցանկացած գյուղատնտեսական կուլտուրա: Թուրքիայի գյուղատնտեսական արտադրանքը 2010 թ. կազմել է 62 միլիարդ դոլար՝ 2002 թ.-ի 24 միլիարդ դոլարի համեմատ: 2010 թ. արտահանվել է 5 միլիարդ դոլար գյուղմթերք՝ 2002 թ.-ի 1,7 միլիարդ դոլարի համեմատ:

Երկրի աշխատուժի 25%-ը զբաղված է գյուղատնտեսական գործունեությամբ: ՀՆԱ-ի 8,4%-ը նույնպես բաժին է ընկնում գյուղատնտեսությանը: Թուրքիայում գյուղատնտեսության հիմնական ճյուղը բուսաբուծությունն է, որին բաժին է ընկնում գյուղատնտեսական ընդհանուր արտադրանքի մոտ

67%-ը: Անասնապահության բաժինը 27% է. մնացածը անտառային տնտեսությունն է և ձկնորսությունը: Թուրքիայից արտահանվում են հիմնականում հացահատիկային կուլտուրաներ (ցորեն, եգիպտացորեն), լոբազգիներ, տեխնիկական կուլտուրաներ (շաքարի ճակընդեղ, բամբակ, թեյ, ծխախոտ), ընկույզներ, թարմ և չորացրած մրգեր: Հիմնականում արտահանումն իրականացվում է Եվրոպա, ԱՄՆ, Մերձավոր Արևելքի երկրներ: Թուրքիան դասվում է սննդամթերքի արտահանման 10 խոշորագույն երկրների շարքին: Այն ունի 78 միլիոն հեկտար տարածք (որը նույնն է,

ինչ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան միասին վերցրած), որի 40%-ը օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով:

Նշենք՝ Թուրքիան աշխարհում խաղող արտադրողների խոշորագույն հնգյակի մեջ է մտնում՝ արտադրելով տարեկան 3,2-3,6 միլիոն տոննա: Թուրքիան հայտնի է նաև չրեդենով. ծիրանի

ողջ բերքը օգտագործվում է չրի պատրաստման համար, որի 95%-ը արտահանվում է: Ջարգացած է նաև սառեցված մրգերի և բանջարեղենի արտադրությունը. արտադրանքի 75-80%-ը արտահանվում է: Թուրքիան միջազգային շուկայում գերիշխող դիրքեր ունի ծիրանի, չամիչի և ընկույզի շուկաներում: Տարածված է նաև ցիտրուսային մրգերի և թեյի արտադրությունը:

Թուրքիայում բուծվում են մոտ 59 միլիոն խոշոր և մանր եղջերավեր անասուններ, որոնցից 12 միլիոնը խոշոր եղջերավոր են: Սակայն վերջին տարիներին անասնապահության ոլորտում կանգ է նկատվում՝ կապված պետության կողմից այս ոլորտի ոչ արդյունավետ օժանդակման հետ: Անասնապահության համեմատաբար թույլ զարգացածության պատճառներից մեկը Եվրամիությունն սնի և անասունների արտահանման արգելքն է, ինչպես նաև՝ բուսաբուծական արտադրանքի գների արագացված աճը:

Թուրքիայում գոյություն ունի գյուղատնտեսության սուբսիդավորման ընդհանուր ծրագիր: Օրինակ, եթե գյուղացին մշակում է 1 հեկտար հողատարածք, ապա նա սուբսիդավորվում է 90 դոլարով, ևս շուրջ 14 դոլար նա ստանում է դիզելային վառելիքի գծով ծախսերի փոխհատուցման համար:

Սուբսիդիայից օգտվում են տնտեսությունների 90%-ից ավելին: Սակայն դա ունի նաև բացասական հետևանք. գյուղացիական մանր տնտեսությունները, որոնք մշակում են հողի մեծ մասը, կախվածության մեջ են սուբսիդիաներից, իսկ նրանց կենսագործունեությունն առանց սուբսիդիաների պարզապես վտանգված է:

▶▶ գյուղատնտեսական մթերքների շարժը հարևան պետությունների միջև այնքան էլ ակտիվ չէ, թեև բոլոր երկրներն էլ գյուղմթերքներ արտահանողներ են: Թուրքիային ու Վրաստանին առավել հետաքրքիր է եվրոպական շուկան, Չայաստանին ու Ադրբեջանին՝ ռուսականը, Իրանին՝ մերձավորարևելյանը: ◀◀

Իրան

Իրանի գյուղատնտեսությունն աչքի է ընկնում ապրանքայնության ցածր աստիճանով: Երկրի աշխատունակ բնակչության մեկ քառորդը զբաղված է գյուղատնտեսությամբ, սակայն պարենային ինքնաբավության աստիճանը բարձր չէ՝ մոտ 75%: Գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում մոտ 11% է: Վերջին տարիներին Իրանի կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում գյուղատնտեսության զարգացմանը: Սուբսիդիայի ծավալը հասցվել է տարեկան գրեթե 1 միլիարդ դոլարի, 50 տարով արգելվել է բոլոր տեսակի մրգերի ներմուծումը, պետական աջակցություն է ցուցաբերվում արտահանմանը: Երկիրը հասել է նրան, որ ցորենի ու կարտոֆիլի պահանջարկն ամբողջովին բավարարվում է տեղական արտադրության հաշվին: Սկսած 2010 թ.-ից՝ ցորենը նաև արտահանվում է (այդ թվում՝ Հայաստան):

Իրանը գյուղատնտեսական նպատակներով օգտագործում է իր տարածքի մոտ 10%-ը, հիմնականում հյուսիսային՝ Կասպից ծովի մերձակա տարածքներում: Պատճառը անապատային և լեռնային տեղանքն է, ինչպես նաև՝ ոռոգման ցանցի անկատարությունը: Ըստ որոշ գնահատականների՝ Իրանն ունի գյուղատնտեսության համար օգտակար 51 միլիոն հեկտար հող, սակայն փաստացի օգտագործում է միայն 15 միլիոնը:

Բուսաբուծությունը Իրանի գյուղատնտեսության հիմքն է: Ներկա դրությամբ Իրանը մի շարք գյուղատնտեսական կուլտուրաների գծով հանդիսանում է աշխարհի խոշորագույն արտադրողներից մեկը: Իրանին բաժին է ընկնում շաֆրանի (համեմունքի տեսակ) համաշխարհային արտադրության 80%-ը, պիստակի 60%-ը, արմավի 17%-ը, ընկույզի 12%-ը, ծիրանի 8,5%-ը և լիմոնի 8%-ը:

Անասնապահությունը համեմատաբար թերզարգացած է և ապահովում է գյուղատնտեսական արտադրանքի մոտ 37%-ը: Հիմնականում բուծում են ոչխար, այծ, ուլտ, քիչ քանակությամբ խոշոր եղջերավոր անասուններ:

Վրաստան


Վրաստանի գյուղատնտեսությունն, ընդհանուր առմամբ, ցածր արդյունավետ է: Աշխատուժի 50%-ը զբաղված է գյուղատնտեսությամբ, որը, սակայն, ապահովում է ՀՆԱ-ի 12%-ը: Գյուղատնտեսական նպատակներով օգտագործվում է երկրի տարածքի 16%-ը, կամ մոտ 562 հազար հեկտար: Կարևոր նշանակություն ունեն թեյի և ցիտրուսայինների արտադրությունը, խաղողագործությունը: Վերջին ժամանակներս մեծ կարևորություն է տրվում նաև հացահատիկայինների մշակմանը: Առայժմ ցորենի նկատմամբ պահանջարկի միայն 30%-ն է ապահովվում ներքին արտադրության հաշվին: 2008 թ. Վրաստանի գյուղատնտեսական արտադրանքը կազմել է 1,3 միլիարդ դոլար, որի 55%-ը բաժին է ընկնում անասնապահությանը: Երկրի գյուղատնտեսական պոտենցիալի լիարժեք օգտագործման նպատակով 2006թ. Համաշխարհային բանկի օժանդակությամբ իրականացվել է գյուղատնտեսական հունք վերամշակող ձեռնարկությունների կառուցման և վերազինման ծրագիր: Բացի այդ, ԱՄՆ-ը և Եվրամիությունը զգալի ֆինանսական օժանդակություն են ցուցաբերում Վրաստանի գյուղատնտեսությանը՝ տարեկան մոտ 270 միլիոն դոլար :

Առայժմ Վրաստանում գյուղատնտեսության ապրանքայնացման մակարդակը շատ ցածր է: Գյուղում արտադրվող մթերքների միայն 28%-ն է հայտնվում ազատ շուկայում,

մնացածը բնամթերային արտադրություն է: Հետաքրքիր է, որ խորհրդային տարիներին վրացական գյուղերի ապրանքայնության աստիճանը մի քանի անգամ ավելի բարձր էր:

Ադրբեջան

Ադրբեջանի գյուղատնտեսությունը 2010 թ. ապահովել է ՀՆԱ-ի 5,4%-ը, կամ ոչ նավթային սեկտորի 12%-ը: Գյուղմթերքների արտադրությունը 2010 թ. կազմել է մոտ 2,8 միլիարդ դոլար: Գյուղատնտեսությունում աշխատում է զբաղված բնակչության 38%-ը: Ադրբեջանն այն քիչ երկրներից է, որ պահպանել է գյուղատնտեսական գործունեության խորհրդային համակարգը: Այսինքն՝ գյուղատնտեսական գործունեությունը հիմնականում իրականացվում է պետական կամ կոլեկտիվ տնտեսությունների միջոցով: Երկրում առկա է 2.300 կոլեկտիվ գյուղատնտեսական ձեռնարկություն և 2.700 մասնավոր տնտեսություն: Խորհրդային կացութաձևի պահպանման պատճառով երկրի գյուղատնտեսությունում արտադրողականությունը խիստ ցածր է՝ թեև առկա են բարեբեր հողեր ու բարենպաստ կլիմա: Նշենք, որ Ադրբեջանն ապահովում էր նախկին ԽՍՀՄ-ի գյուղմթերքների արտադրության 10%-ը: Ներկայումս գյուղմթերքների 60-70%-ը արտահանվում է Ռուսաստան: Երկրի տարածքի 55%-ը պիտանի է գյուղատնտեսության համար, ու, չնայած բարենպաստ բնակլիմայական պայմաններին՝ պետությունը հսկայական միջոցներ է ուղղում դեպի գյուղատնտեսություն: Ադրբեջանի պետական բյուջեից 1 հեկտարի հաշվով գյուղատնտեսական նպատակներով ծախսվում է 192 դոլար: 2012 թ. պետական բյուջեում 600 միլիոն դոլար է նախատեսվել գյուղատնտեսության ֆինանսավորման համար: Գյուղատնտեսությունն ամբողջովին ազատված է հարկերից, մոյնիսկ՝ հողի հարկից:



The Importance of the Loan Component of the MCA Armenia "Water to Market" Program in the Agricultural Sector Loan Provision Process

By Sergey Meloyan, Head of MCA Armenia "Water to Market" Program

Currently, the main participants of agricultural loans market are Armenian commercial banks and credit organizations. Nevertheless, the loan investments made by the latter in this branch of the economy continue to be extremely low.

According to the data of the Armenian Central Bank, agricultural sector loan investments by the bank system only constitute an average of 5 percent of loans provided to the real sector of the economy. Some 19.9 percent of AMD and foreign currency loans made available to the agricultural sector have a repayment term of up to 1 year and 80.1 percent of the loans have a longer repayment term. It should be noted that this situation is preconditioned by the availability of various programmatic loans, including those provided within the framework of MCA Armenia "Water to Market" loan component.

The loan component has been implemented since 2008 and will run through 2020. In September 2010, the "Water to Market" loan component exhausted its \$8.5 million budget. Currently, the loan provision continues from the resources of the revolving fund, which was formed from the repayment amounts of allocated loans. It is important to note that following the program regulations, the amount, which remains in the revolving fund of crediting organizations at the end of the month, shall not exceed 8.5 million drams. The mentioned limitation regulates the availability of revolving funds for all crediting organizations.

As of November 1, 2011, the program approved 1,082 credit units with a total amount of 4780.1 million drams (around \$12.5 million). From the very start of activities, despite the relative scarcity of resources, "Water to Market" loans were able to occupy a rather unique place within the financial market and received a positive feedback by displaying a number of competitive advantages against other loans active at that moment. I will try to present the advantages by comparing them to the agricultural loans made available through other programs.

- The "Water to Market" loans are provided exclusively in the national currency (AMD), which excludes the fluctuation risks occurring as a result of foreign currency interventions. Actually, with an internal dram circulation, the borrower does not have to constantly convert the amounts and incur additional costs because of that, as well as not being exposed to the risks occurring as a result of foreign currency fluctuations. Such a situation was recorded in the Armenian financial market in March 2009, when the U.S. dollar value skyrocketed and created obvious difficulties among the vast mass of creditors.
- The "Water to Market" loans are provided for a period of between 24-84 months, which allows the conduct of activities of capital nature requiring long-term compensation, such as setting fruit and grape gardens, reprocessing agricultural products, founding greenhouse and refrigerated farms. The same approach is peculiar to the

loans provided within the framework of other programs as well, including the IFAD, and World Bank. Nevertheless, the loans provided from the crediting organizations' own funds are mostly aimed at short-term financing. This was specifically true at the time when "Water to Market" program first started.

- With the purpose of directing the loan resources at capital expenditures and, in particular, importing advanced irrigation and processing technologies, the project limits the size of the loan amount spent on revolving funds and non-specific professional activities within the limits of 20 percent of the loan amount. A similar approach is also peculiar to other programmatic loans, but is used seldomly when the loan provision from the crediting organizations' own funds is concerned.
- The significant advantage of "Water to Market" loans is the rather low interest rate. The weighted average of the interest rate of the loans provided from the program inception until now is 11.2 percent in cases when a number of banks accept term deposits at this rate. This cannot be viewed as an artificial distortion of the financial market, since given the economic situation, the Armenian government also implements a dram loan subsidy program. We can actually say that the given level of the "Water to Market" loan interest rates coincides with the government's policy in this field.



trainings.am – fill the gap!

57 47 78

info@trainings.am

trainings.am

BE COMPETITIVE

* Armenian Central Bank 2010 Bulletin, page 83.



the other hand, it increases the targeted nature of the loans. Around 46,000 farmers have been trained up to now. In fact, the loan component creates the financial ground for new technologies, as well as for manufacturing and promoting high value agricultural products.

- There is no doubt that these advantages have had a positive impact on fostering a high level of loan reliability, thus, ensuring an unprecedentedly high indicator of loan repayment. As of November 1, 2011, the overdue principal amount is only 11.88 million drams or 0.3 percent of the overall loan portfolio.
- As of now, the component cooperates with eight crediting organizations, namely three banks and five universal credit organizations (UCOs). It should be

- On top of this, it is important to note that the project limits the maximum interest rate threshold as 12 percent, while in the cases of IFAD and World Bank loans, the latter do not fix this provision as a mandatory program requirement.
- The maximum size of “Water to Market” loans is 10.5 million drams. Currently, they are more attractive to small farms. In addition to IFAD and World Bank loans, the “Water to Market” loans, the maximum size of which constitute \$150,000, actually include a rather large circle of borrowers having various financial needs depending on the level of the capital intensity of their activities. This is the reason why the main portion of our borrowers are individual farmers with comparatively small borrowing power, the provision of loans to which has always been more problematic.
- The “Water to Market” loan provision area is very definite, providing funding in the fields of horticulture, reprocessing, preservation of yield, manufacturing of high value agricultural products, procurement of agricultural equipment and instruments, implementation of advance processing and irrigation technologies and other similar functions. Such centralization of financial resources allows us to influence the program target sector in a more effective and speedy manner and with relatively little resources.
- The mandatory condition of receiving “Water to Market” loans is the training of the borrowers on high value agriculture and intra-farm water management within the framework of the program. On one hand, this allows farmers to gain applicable knowledge in order to implement more effective production and to realize and apply new technologies. On

noted that due to the above-mentioned peculiarities of the component, the UCOs are more active than banks and have allocated 79 percent of the overall loan portfolio. From this point of view, the component assists the UCOs in their fast realization and further strengthening, thus, creating a free competitive field in the sphere of agricultural loan provision.

- The “Water to Market” loans enjoy high demand among borrowers due to the low level of risk. This is proven by the fact that as of November 1, 2011, the amount which remained in the crediting organizations’ revolving fund is only 33.1 million drams, while on the side of other programmatic loans, including those of the IFAD and World Bank, the revolving fund remainder is much higher.



ՀԱՀ Հայաստան «Ջրից դեպի շուկա» ծրագրի վարկային բաղադրիչի կարելությունը գյուղատնտեսական ոլորտի վարկավորման գործընթացում

Յեղիհնակ՝ Սերգեյ Մելոյան, ՀԱՀ-Հայաստան ջրից դեպի շուկա ծրագրի ղեկավար

Ներկայումս գյուղատնտեսական վարկերի շուկայի հիմնական մասնակիցներն են ՀՀ առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները, այդուհանդերձ, վերջիններիս վարկային ներդրումները տնտեսության այս ճյուղում շարունակում են մնալ խիստ փոքր:

Համաձայն ՀՀ ԿԲ տվյալների՝ ՀՀ բանկային համակարգի վարկային ներդրումները գյուցատնտեսության ոլորտում միջինում կազմում են տնտեսության իրական հատվածին տրամադրված վարկերի ընդամենը 5 տոկոսը, ընդ որում՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրված դրամային և արտարժույթային վարկերի 19,9 տոկոսն ունի մինչև 1 տարի, իսկ 80,1 տոկոսը՝ 1 տարուց ավելի մարման ժամկետ: Հարկ է ասել, որ նշվածը հիմնականում պայմանավորված է տարբեր ծրագրային, այդ թվում՝ ՀԱՀ-Հայաստան, ՋՀՀ վարկային բաղադրիչի շրջանակներում տրամադրվող վարկերի առկայությամբ:

Վարկային բաղադրիչն իրականացվում է 2008թ.-ից և գործելու է մինչև 2020թ.:

2010թ. սեպտեմբերին ավարտվեց «Ջրից դեպի շուկա» (ՋՀՀ) վարկային բաղադրիչի 8,5 միլիոն ԱՄՆ դոլարի արժողությամբ ծրագրային ողջ գումարը: Այսօր վարկավորումը շարունակվում է տեղաբաշխված վարկերի մարումներից առաջացած շրջանառու ֆոնդի հաշվին: Հարկ է նշել, որ ծրագրի կանոնակարգերով նախատեսված վարկատու կազմակերպությունների մոտ շրջանառու ֆոնդի գումարների մնացորդը ամսվա վերջի դրությամբ չպետք է գերազանցի 8,5 միլիոն ՀՀ դրամը: Նշված սահմանափակումով կարգավորվում է ազատ շրջանառու միջոցների հասանելիությունը բոլոր վարկատու կազմակերպություններին:

01.11.2011թ. դրությամբ ծրագրի կողմից հաստատվել են 1.082 միավոր վարկեր՝ 4 780,1 միլիոն դրամ (մոտ 12,5 միլիոն ԱՄՆ դոլար) ընդհանուր գումարով:

Գործունեության սկզբից, չնայած ռեսուրսների համեմատաբար սահմանափակ լինելուն, ՋՀՀ վարկերը բավական ուրույն տեղ գրավեցին ֆինանսական շուկայում, և ստացան դրական արձագանք՝ հանդես բերելով մրցակցային մի շարք առավելություններ տվյալ պահին գործող վարկերի նկատմամբ:

